Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը. Խաչատուր Կիրակոսյան

Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի գլխավոր քարտուղար

Գործուղման վայրը և ժամկետները. Ղրղզստանի Հանրապետություն, ք. Բիշքեկ

Հրավիրող կողմը. ԱՊՀ մասնակից երկրների խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման Հանձնաժողով:

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցել ԱՊՀ երկրների խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման Հանձնաժողովի 23-րդ նստաշրջանին և ԱՊՀ մասնակից պետությունների միջուկային անվտանգության կարգավորող մարմինների ղեկավարների ներկայացուցիչների խորհրդի նիստին:

Քննարկված թեմաները.

Կարգավորող մարմինների խորհրդի նիստի ժամանակ խորհրդի քարտուղարի կողմից ներկայացվեց զեկույց 2022թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ: Որոշվեց խորհրդի քննարկմանը ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- «ԱՊՀ երկրների միջուկային անվտանգության կուլտուրայի կատարելագործման և առաջնայնության համալիր միջոցառումների մասին» փաստաթղթի նախագիծը:
- «Ջերմամիջուկային սինթեզի տեղակայանքների անվտանգության կարգավորման փաստաթղթերի մշակման նպատակահարմարության վերաբերյալ» նախագիծը:
- ԱՊՀ երկրների համար «Ռադիոակտիվ թափոնների կառավարման մոդելային մոտեցումների մշակման նպատակահարմարության վերաբերյալ» նախագիծը:

Հայաստանի կողմից առաջարկվեց բոլոր տիպի հայեցակարգերի և փաստաթղթերի մշակման ժամանակ հաշվի առնել ԱՊՀ երկրների առանձնահատկությունները, մասնավորապես զբաղեցրած տարածքների չափսերը, մարդկային և ֆինանսական ռեսուրսների տարբերությունները, տվյալ բնագավառում ունեցած փորձը և մոտեցումների կիրառման ազատության հնարավորությունները:

ԱՊՀ մասնակից պետությունների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման հարցերով Հանձնաժողովի 23-րդ նստաշրջանի նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. 2021-2022թթ. ԱՊՀ Հանձնաժողովի գործունեության մասին զեկույցը:
2. «ՈՒրանի արդյունահանման հետևանքով ազդեցության ենթարկված պետությունների տարածքների ռեկուլտիվացիա» միջպետական նպատակային ծրագրի իրագործման ընթացիկ վիճակը:
3. 2024-2026 թվականներին Ղազախստանի ատոմային էներգիայի ինստիտուտում իրականացվող գիտական հետազոտությունների ծրագրի և 2022թ. թվականին տվյալ ծրագրով նախատեսված աշխատանքների ընթացքը:
4. 2018 թվականի նոյեմբերի 2-ի ԱՊՀ երկրների միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակի առաջացման դեպքում պատրաստականության ապահովման, փոխօգնության, համագործակցության և հետևանքների վերացման համաձայնագրի ներդրման ընթացքը:
5. Խաղաղ նպատակներով միջուկային տեխնոլոգիաների նպատակով, ԱՊՀ երկրների ազգային միջուկային անվտանգության համակարգի զարգացման միջոցառումների ծրագրի իրականացումը:
6. Խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման նախագծերի հասարակության կողմից ընդունելի լինելու և ոչ էներգետիկ ոլորտում հեռանկարային նախագծերը:
7. «Ռոսատոմ» կորպորացիայի ԱՊՀ երկրների քաղաքացիների համար վճարվող ուսումնական ծրագրի մասին:

   Ըստ ներկայացված ծրագրի ԱՊՀ անդամ երկրների քաղաքացիները, որոնք ունեն որոշակի մասնագիտություններով (միջուկային տեխնոլոգիաներին մոտ կամ տեխնիկական) բակալավրի որոկավորում, կարող են դիմել Ռուսաստանի որոշակի ԲՈՒՀ-երում կրթությունը շարունակելու համար, ամսեկան 20.000 ռուբլի կրթաթոշակով:
8. «Ճառագայթային աղբյուների տեղափոխության ժամանակ ԱՊՀ երկրների տեղեկատվական համագործակցության համաձայնագրի ներդրման» աշխատանքային խմբի գործունեությունը:
9. Տեղեկատվական համագործակցության և օպերատիվ արձագանքման նպատակով, ԱՊՀ երկրների ճառագայթային իրավիճակի մոնիտորինգի տվյալների փոխանակման համակարգի ստեղծման տեխնիկական նախագիծը:
10. ԱՊՀ անդամ երկրների, վտանգավորության I և II դասի թափոնների հետ կապված հարցերի կարգավորման Հայեցակարգի նախագիծը:
11. Շահագործումից հանման տարբեր փուլերում գտնվող միջուկային ժառանգության տեղակայանքների վիճակի գնահատման մեթոդը:
12. Տարբեր ընթացիկ հարցերի քննարկումը:

12.1. ԱՊՀ մասնակից պետությունների ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման հարցերով Հանձնաժողովի հերթական նիստի անցկացման վայրը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայկական կողմից հարց բարձրացվեց պատրաստականության բարձրացման նպատակով անցկացվող վարժանքներում ներգրավել հնարավորինս շատ երկրների, ինչպես նաև նման վարժանքների անցկացման ֆինանսավորման վերաբերյալ: Քննարկման արդյունքում առաջարկությունն ընդունվեց և նշվեց, որ կան բավարար ֆինանսական միջոցներ նման վարժանքներ անցկացնելու համար:
Հայաստանի կողմից առաջարկվեց առավել ակտիվ օգտագործել տվյալ ասպարեզում Հայաստանի առկա փորձը, միջոցառումների մեջ ներգրավելով ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի գիտատեխնիկական կենտրոնը, որպես միջուկային անվտանգության ոլորտում գործող հաստատություն: Առաջարկն ընդունվեց:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,

Որոշվեց 2022 թվականի Հանձնաժողովի աշխատանքը գնահատել բավարար:

Պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.
Հանդիպման ընթացքում փաստաթուղթ չի սորագրվել

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Invalid signature

X

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Signed by: KIRAKOSYAN KHACHATUR 2203570148

Ստորագրությունը, ամսաթիվը:
11.11.2022թ.